

848-6

ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ



ԳՈՐԾԱԳՈՒՄ

Պ Ի Ե Ս

№ 7.

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1927.

50+

Handwritten text in a cursive script, possibly a list or account, with some red ink markings.

Handwritten text, possibly a signature or a date.


Handwritten text at the bottom of the page, possibly a signature or a date.



ԳՈՐԾԱԴՈՒԼ

ԴՐԱՄԱՏԻՔ. ԵՏՅՈՒԴ 1 ԳՈՐԾ.

~~ՀԷԳԳՏ~~
A $\frac{I}{8648}$



№ 7.

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927.

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐԲՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 716Բ
ՏԻՐԱԺ 1000.

ԳՈՐԾԱԴՈՒԼ

ԴՐԱՄԱՏԻՔ. ԵՏՅՈՒԴ 1 ԳՈՐԾ.

Փոքրիկ լուսամուտներով մի սենյակ: Մի մեծ գործարանի հանրակացարանում: Խոնավությունից պաստառը տեղ-տեղ սյուկվել, կախ ե ընկել: Պատուհանի մոտ մի թախտ, հնամաշ գորգով ծածկված, հասարակ սեղան՝ վրան թափթփված են մի քանի եփահազին բրողյուրներ, յերկու տաբուրետ, պատի տակ անդուկ, վրան դարսած են տեղաշորեր:

ՍԵՆՏԱԿ.— Միջահասակ, մոտ 33 տարեկան, փայլուն սև աչքերով, նիհար: Հագնված ե շատ հին, անդրավարտիկը շատ նորոգելուց կարճացել ե, կոշիկները մի քանի տեղից ծակծկված:

ԱՆՆԱ.— Նրա կինը: Գրավիչ դեմքով, աչքերը, մազերը սև: Հագնված ե շատ հասարակ: Մոտ 22 տ.:

Վարագույրը բացվելուց ՍԵՆՏԱԿԸ քայլում ե սենյակում ե ազահությամբ ծխում: ԱՆՆԱՆ անշարժ նստած ե սեղանի մոտ, աչքերը հառած մի կետի: Մոտ մի բոպե բեմում լուսթյուն ե: Դրսից լավում ե խուլ, անորոշ աղմուկ:

Աննա.—Բավականն ե, խեղդվեցինք:

Սեդրակ.—Ինչ անեմ, չծխեմ... (Նորից ֆայ-
լում ե: Լռություն):

Աննա.—(Ընդհատելով) Ինչ շուտ սկսեցին ցըր-
տերը:

Սեդրակ.—Սմտի քանի՞նն ե:

Աննա.—Քսանյոթը:

Սեդրակ.—Քսանյոթը... Նոյեմբերը վերջանում
ե: (Ընկնելով աթոռի վրա, թաղում ե գը-
լուխը ձեռների մեջ):

Աննա.—Անցնում ե հարեվան սենյակը յեվ
ելի յե՞ս գալիս):

Սեդրակ.—(Բարձրացնելով գլուխը): Քնած ե:

Աննա.—Քնած ե: (Կարն լռությունից հետո)

Սեդրակ գնա... Մի անգամ ել գնա, վոտ-
ներն ընկիր, աղաչիր, պաղատիր...

Սեդրակ.—Նա ասաց, վոր կըզա:

Աննա.—Ել յերբ. տաքուլթյան մեջ այրվում ե,
խեղճ յերեխաս: Թուլությունից չի կարո-
ղանում աչքերը փակել... Քնած ե կիսա-
բաց աչքերով... Յես սարսափում եմ յերբ
քնում ե և վախենում, յերբ զարթնում ե:

Սեդրակ.—Հիվանդ ե... Կըմեռնի... Մենակ կը
մնանք քո ըստի պես... Սարսափելի յե...

Բայց յես ինչ անեմ, մենակ յես հո չեմ
կարող գնալ ասել, վոր քաղցած ենք, յե-
րեխաս մեռնում ե, բժիշկ ե հարկավոր,
դեղ... (Վախեցած վոսի յելնելով): Ո՞վ ե...
(Լռություն): Կարծեմ մեկը դուռը բախեց:

Աննա.—Քեզ թվաց. մարդ չկա:

Սեդրակ.—Բայց ինչո՞ւ յե բժիշկը ուշանում...
Տղերքն ել չկան, տեսնենք ինչ վճռվեց:
Յեթե մի քանի որ ել շարունակվի, բոլորս
ել քաղցից կըմեռնենք, ել ուժ չկա դիմա-
դրելու...

Աննա.—Սահակ ապորը ասել ես, վոր գա:

Սեդրակ.—(Վոսի ձայն լսելով արագ դիմում ե
դեպի դուռը):

Ա. բանվոր.—(Դռներում հանդիպում ե Սեդրա-
կին: Նա յերիճասարդ ե նիհար յեվ գու-
նաս. հուզված ու շփոթված): Սեդրակ, ա-
տրճանակդ:

Սեդրակ.—Ի՞նչ կա:

Ա. բանվոր.—Տո՛ւր ատրճանակդ. դրությունը
քանի գնում սպառնալի յե դառնում: Առաջ
խնդրում եյին, ուղում եյին համոզել, հաշ-
տության գալ. իսկ այժմ ուրիշ լեզվով են
խոսում: Պահանջում են, վոր մի ժամից
վերսկսենք աշխատանքները: Ով չհպատակ-
վի, կըվճնդվի: Ինչպես յերևում ե վճռել

են գենքի ուժի դիմել. մեր բոլոր կետերից
յերեք կետն են ընդունել, մնացածը մեր-
ժուռն են. իսկ Սահակ ապոստոլը վոչ մի պայ-
մանով չեն ուզում: Կառավարիչն ասում է,
վոր իրեն հանդուգն, լիրբ բանվորներ պետք
չեն. մի մարդ, վոր ձեռք է բարձրացնում
իր մեծի վրա, նա չի կարող լավ բանվոր
լինել:

Սեդրակ.—Բայց չե վոր այդ թեթև հանցանքի
համար նրանք նրան յերեք ամիս բանտում
պահեցին:

Ա. բանվոր.—Այդ քիչ են համարում, կարծում
են, վոր պետք է սովամահ անել: Մարդը
24 տարի յե ծառայում է այս գործարա-
նում, յոթ յերեխայի տեր է... Պառավ
մայր... Յեվ նրանք վճռել են այդ չնչին
վարմունքի համար նրան ընտանիքով փո-
ղոց նետել:

Աննա.—Տեր աստված. այդ մարդիկ սիրտ չու-
նեն, իճատանք չունեն...

Ա. բանվոր.—Գրողի ծայրը գնան իրանք ել ի-
րանց իճատանքն ել: Բայց այդ թող հաս-
տատ իմանան, թույլ չենք տա... Ինչ ել
վոր լինի վորոշեցինք չգիշել, կըշարունա-
կենք գործադուլը, մինչև իրենք գիշեն,
մեր բոլոր պահանջներին բավարարեն: Բա-

վական ե ինչքան մեր արյունը ծծեցին...
Յերեխան ի՞նչպես ե:

Աննա. — Շատ վատ, նոր քնեց:

Ա. բանվոր. — Բժիշկն յեկամ:

Աննա. — Դեռ վոչ:

Ա. բանվոր. — Յերեխի վախենում ե:

Աննա. — Ումնի՞ց պիտի վախենա:

Ա. բանվոր. — Գործարանատիրոջից: Իսկույն կը հայտնեն, վոր բժիշկը գործադուլի ժամանակ բանվորներին այցելություն ե անում... Տեղից կըզրկվի: (Դրսից աղվուկը ավելի լսելի յե դառնում): Դե, յես գնացի...

Սեղրակ. — Կաց յես ել եմ գալիս:

Ա. բանվոր. — Ատրճանակը չմոռանաս:

Աննա. — Սեղրակ:

Սեղրակ. — Ի՞նչ ես ուզում:

Աննա. — Մնա՛...

Սեղրակ. — Մնամ...

Աննա. — Յերեխան հիվանդ ե:

Ա. բանվոր. — Դու Սեղրակ մնա, յես գնամ տեսնեմ ինչ են անում... Մի քիչ ել դիմանանք, տեսնենք վերջներս ինչ ե լինում:

Սեղրակ. — Ի՞նչ պիտի լինի... Փողոցի շների նման կըսատկոտենք:

Ա. բանվոր. — Ձե, չե Սեղրակ, յես մինչև մի քանիսին չսատկացնեմ, ինքս չեմ սատկի...

Եժան չեմ տա ինձ: Մի վախենա, ելի ի-
րանք կըզան կըխնդրեն, վոր գնանք բանե-
լու... Դու մնա յերեխի մոտ, յերբ պետք
լինի իմաց կըտամ... Տո՛ւր ատրճանակդ,
կարող ե պետք գալ:

Սեղրակ.—(Հանում ե բագսասեղից յեվ սալիս):

Սահակ.—(Այդ բոպեյին ներս ե մտնում այե-
խառն, յերկար հասակով, մազերը յերկար
գզգզված, դեմքը ծաղկասար, շորերը կեղ-
տոտ: Չմեռային վերարկու բաւքակը սեղ-
սեղ դուրս թափված: Շեմքում մի բոպե
կանգ ե առնում): Ինչո՞ւ ճրագ չեք վառել:

Ա. բանվոր.— Ինչ ճրագ վառելու ժամանակ ե.
որը ցերեկով:

Սահակ.— Մու՛թ ե: Ինչ անենք, վոր կես որ ե.
յերբ սենյակում լույս չկա կես որին չեն
նայիլ:

Ա. բանվոր.— Յես գնացի:

Սահակ.— Դու ի՞նչ եյիր անում այստեղ:

Ա. բանվոր.— (Յույց սալով ասեմանակը): Կա-
րող ե պետք գալ:

Սահակ.— Այ տղա, իմ պատճառով ասա շատ ել
չհամառեն... Զհանգամը իմ գլուխը, կըսատ-
կոտենք, պրծավ գնաց. ո՞ւմ ինչ կըպակա-
սի: Ել դժվար ե դիմանալ. թող սկսեն աշ-
խատանքները: Ասա տղերանցը, նրանց մոտ

չմտա, վոր շասեն, չկարծեն թե յես եմ
նրանց գրգռում... Զգո՛ւյշ յեղեք, տեսնող
ե յեղել, ասում են, գործարանում վոստի-
կաններ և գինվորներ են թագնվել:

Ա. բանվոր. — Սահակ ապեր, գինվորներով մեզ
չեն վախեցնիլ, առաջին անգամը չե, շատ
ենք տեսել... Զիջել-միջել չկա: Սա քեզ
համար չե—ինչ անում ենք, դու առիթ ես:
Բանը սկզբունքի մեջ ե. այսոր քեզ են
փողոց շարտում, վաղը ինձ դուրս կանեն:
Պետք ե հաշիվները մաքրել, պետք ե այդ
շներին հասկացնել, վոր մեր արյունը ծծե-
լով ե, վոր խողի պես ճարպակալել են:
Պետք ե նրանց ասել, վոր մենք հասկացել
ենք և գիտենք մեր ուժը և թույլ չենք
տա... Հերիք ե ինչքան լռեցինք, ինչքան
սուս ենք անում գլխներին ես նստում:

Սահակ. — Բանը արյունահեղության չհասցնենք:

Ա. բանվոր. — Արյուն, դե թող արյուն լինի...
Վո՛չ մի գիջում. սկսել ենք — տեղ կըհաս-
ցնենք... Յես գնում եմ: (Թագցնում ե
աւրնանակը. ուզում ե գնալ. ներս ե սրս-
նում Բ. բանվորը):

Բ. բանվոր. — Տուններդ քանդվի, ինչ եք նստել.
վեր կացեք. վոստիկանապետը կառքով յե-
կավ. բանակցությունների մեջ են մերոնց

հետ, վորտեղ վոր ե կըսկսի... Զորս գործա-
րաններից լուր կա... Սկսվեց թե չե, կըզան
ոգնության:

Ա. բանվոր.— Կըզան, շատերը կըզան... Մենք
շատ ենք, մենակ չենք, գնանք: (Ա. յեվ Բ.
բանվորները գնում են: Նրանց գնալուց
հետ՝ մի պահ լռություն):

Սահակ.— (Կես շիտ ողի յե հանում վերա-
կուի գրպանից յեվ դնում սեղանի վրա:
Գլխով մյուս սենյակը ցույց տալով Ան-
նային): Ի՞նչպես է:

Աննա.— Վատ, նոր քնեց: (Անցնում է մյուս
սենյակ):

Սահակ.— (Նստում է: Շիտը ձեռքի մեջ շարժե-
լով խփում է մյուս ձեռքի դասակին:
Խցանը դուրս է թռչում. պատուհանի վրա-
յից բերում է ողու բաժակը. մեկը ինքը
խմելով, նորից լցնում է յեվ դեմ անում
Սեդրակին):

Սեդրակ.— Յես չեմ խմում:

Աննա.— (Դուրս է գալիս յեվ մնում դռներում):

Սահակ.— Կըխմես... Ուզես, չուզես կըխմես:

Սեդրակ.— (Մի վայրկյան տեսնվելուց հետո
առնում է յեվ մի շնչով դասարկում):

Սահակ.— Մեկն էլ...

Սեդրակ.— (Տեսնվում է ու վերջը վնոական):

Հը... Հավ, տուր:

Աննա.—(Առաջ գալով): Վոչ, բավական է:

Սեդրակ.—Թող, թող սատկեցնեմ այս վորդը:
կրծում, տանջում է... Թող մոռանամ, մի
ազատ շունչ քաշեմ:

Սահակ.—(Լուռ առաջարկում է բաժակը):

Աննա.—(Հեռացնելով բաժակը. խիստ): Սահակ
ապեր բավական է: (Վերցնում է ողու շի-
ւր յեվ բարձրացնում կոսրելու նպատակով):

Սեդրակ.—(Վոսի ցատկելով) Չհամարձակվե՞ս ...
Չհամարձակվե՞ս...

Աննա.—(Խփում է շիւր հասակին յեվ հեկե-
կալով ընկնում թախտի վրա):

Սահակ.—(Սեդրակին): Հանգստացի՛ր Սեդրակ...
(Դառը ժպիտով Աննային): Քույրիկ շիշը
ճակատիս տվիր, ինչ արած... Վոչինչ... Յես
դրանից ել՛ վատերն եմ տեսել. յես սովոր
եմ, վոր վզակովիս տալով դուրս վոնդեն:
Ե՛հ... Քույրիկ... ներողութ՛յուն (ուզում է
դուրս գնալ):

Սեդրակ.—(Վստաղած ցնցելով Աննային) Ի՞նչ-
պես ես դու համարձակվում վիրավորել...

Սահակ.—(Առաջ գալով յեվ հեռացնելով Սեդ-
րակին) կաց Սեդրակ... Քույրիկ, ինձ թեև
անպատվեցիր, դուրս ես անում տնիցդ.
բայց ելի լսիր: Յես վատ մարդ չեմ, սիրտ

ունեմ: (Յուլյց սալով կուրծք): Այստեղ
 այնքան մաղձ ե հավաքվել. տանջում եմ,
 չարչարում. խմում եմ, վոր մոռանամ: Ամ-
 բողջ կյանքս եշի պես բանեցրել են ու հի-
 մա յել փողոց են քցում, յերբ բոլոր հյու-
 թերս քամել են: Մեր արյունը ծծել են.
 արյան տեղ մաղձ ե հասում մեր յերակնե-
 րում... Գուրբիկ դու չգիտես, չես ճանա-
 չում եղ մարդկանց... Եղ շան ծնունդների
 կոկորդը այնպես պետք ե հուպ տալ, վոր
 արյունը քթածակերից, աչքերից շատըվա-
 նի պես խփի... Վեր կաց Սեղրակ, գնանք.
 յես փող կըզտնեմ... Գնանք... Յես գիտեմ
 թե վորտեղ կարելի յե գտնել... Հեռու չե
 չաղացրած խողի պես վրջվել ու մնացել ե...
 Գնանք... Յերեխան հիվանդ ե, դեղ ե հար-
 կավոր... Առանց դեղի յերեխան կըմեռնի...

Սեղրակ. — Փող, հա՛... հա՛... հա՛...

Սահակ. — Այո փող: Առանց քրտինքի. քրտինքի
 փուլը անիծված ե (ուզում ե գնալ):

Սեղրակ. — (Հեսեվում ե նրան):

Աննա. — (Աղաչակցան) Սեղրակ:

Սեղրակ. — (Յես դառնալով) յես շուտ կըզամ:
 Գնամ... (Յուլյց սալով գլուխը) կրակ ե ըն-
 կել, այրվում ե: (Դուրս: Աննան անցնում

ե սյուս սենյակը. բեւը մի պահ դա-
սարկ է):

Սեղրակ.—(Արագ մտնում է, մի կողմ նետում
գլխարկը: Դեմքի վրա յերեվում է անհան-
գրասություն, վախ. գունաս է): Նա գնաց ...
Գուցե այժմ... Վոչ, վոչ... Աննա... Աննա ...

Աննա.—(Մտնելով մոտենում է նրան): Ինչո՞ւ ես
դողում, ի՞նչ է պատահել... Ինչո՞ւ յես
այդպես գունատ:

Սեղրակ.—Վոչի՞նչ, վոչի՞նչ... Նա գնաց...

Աննա.—Սեղրակ հեռու կաց նրանից... Յես վա-
խենում եմ:

Սեղրակ.—Նա լավ մարդ է:

Աննա.—Զգիտեմ: Բայց նա ինձ սարսափեցնում
է. թվում է, վոր մի վատ բան պիտի անի,
չատ վատ բան...

Սեղրակ.—Նա սարսափելի բան է ասում... Նա
գնաց, նա ասաց, վոր բժիշկ է հարկավոր,
դեղ, յերեխան հիվանդ է. նա գնաց...

Աննա.—(Վախենալով հասկանալ): Ո՞ւր:

Սեղրակ.—Նա գնաց. յես նրան մենակ թողի:
(Դեպի դուռը):

Աննա.—Սեղրակ...

Սեղրակ.—Վոչ չեմ խելագարվել, մոտ եմ: Գը-
նամ յեթե չկարողացա համոզել յետ դալու,
յես ել նրան ընկեր եմ... Միասին... Այո...

այո, յերեխաս հարադատ զավակս, մահամերձ ե, պետք ե փրկել... փրկել... փրկել... (Ուզում ե գնալ: Դրսից լսվում ե առաջ մի, ապա մի քանի հրացանների պայթուէն: Սեղրակը մի վայրկյան քարացած ե տեղում: Աննան մեռելի նման գունատ, աչքերը լայն բացած: Հրացանների ձայնին հետևում ե մի սուր ճիչ, ապա ընդհանուր ժխոր: Սեղրակը կարծես խոր քնից ըսթափվելով, թափ ե տալիս գլուխը, մի կողմ ե հրում Աննային, լուռ վազում վերցնում ե անկյունից կացինը և արագ ուզում ե դուրս վազել, բայց Աննան նորից փաթաթվում ե նրան և արգելում):

Աննա.—Ո՞ւր ես գնում:

Սեղրակ.—Նրանց մոտ... Թող ինձ... Յես պետք ե նրանց հետ լինեմ:

Աննա.—Սեղրակ ինձ մենակ մի թողնիլ, յես չեմ կարող... յերեխան... յերեխան... Սեղրակ...

Սեղրակ.—Աննա դու խլացել ես... Դու չես լըսում... չես տեսնում ինչպես են մեռնում նրանք... Այնտեղ գնդակահարում են իմ ընկերներին... յես պարտավոր եմ նրանց հետ լինելու... Թող ինձ... Թող... Թող, թե չե կըխփեմ...

Աննա.—(Ամուր բռնել ե) խփի՛ր... խփի՛ր... յես քեզ չեմ թողնիլ: (հեռվից լսվում ե Варшавянка):

Սեղրակ.— Լսո՞ւմ ես... Դեպի մարտ, դեպի կը-
ռիվ ե կանչու՞մ... Նրանք այնտեղ մեռնում
են քեզ, ինձ, բուլոբիս համար, նրանք մեռ-
նում են, վոր փրկեն հազարավոր մերկ ու
թշվառների կյանքը. նրանք կռվում են վոր
տապալեն բռնակալի լուծը... Թող ինձ:

(Այդ բռնակալին յերեխայի պառկած սենյակից
լսվում ե մի թույլ ճիչ: Աննան մի բռնակ տատան-
վում ե, նայում Սեղրակին, ապա թողնում ե, ա-
րագ վերցնում ե լամպը անցնում մյուս սենյակը:
Բեմը կիսախավար ե. մյուս սենյակից լույսի մի
շերտ ե ընկած: Լսվում ե Աննայի ճիչը:

Այդ պահին գրսից լսվում ե հրացանների ձայ-
նը, աղմուկը աստիճարար մտնենում ե: Ուռույթի
ցնծագին պայթուն: Սեղրակը քարացած ե տե-
ղում: Հարևան սենյակից լսվում ե Աննայի ճիչը.
Քիչ անց նա ներս ե գալիս և թուլացած ընկնում
սնդուկի վրա):

Սեղրակ.— (Վախեցած հարցական նայում ե.
Աննան լուռ ե): Աննա՞... Մեռա՞վ...


Աննա.— (Լուռ հեկեկում ե):

Մի բանվոր.— (Ներս վազելով) Սահակին խփե-
ցին...

Սեղրակ.— (Ցնցվում ե, կարծես չհասկանալով)
Ի՞նչ... Ի՞նչ...

Մի բանվոր.— Խփեցին... Գրասենյակի առաջ
կանգնած եյինք... Բանակցությունները

ԲԻ 8648
 15673
 ԲԻ 8648



դեռ շարունակվում եյին... Դեռ ուզում ե-
յին հաշտ վերջացնել, վորտեղից վորտեղ,
աչքերը արյուն կոխած, նա ձեղքեց խիտ
շարքերը և առաջ անցավ: Կատաղած հար-
ձակվեց գործարանատիրոջ վրա և ձեռքի
յեկաթե հաստ կտորով հարվածեց գլխին և
ահուելի ձայնով գոռաց. «Գայլ, ի՞նչ ես ու-
զում մեզանից. ի՞նչ ես տվել, չես կարո-
ղանում առնել... Հերիք ե մեր արյունը
ծծես...»: հենց այդ խոսքերի վրա լավեց
ատրճանակի պայթուեն և նա ընկավ... Տը-
ղերքը գրոհ տվին դեպի գրասենյակը. նը-
րանք սարսափած ներս մտան և դռները
փակեցին, կրկոտրեն մեկ ե...

Մի ուրիշ քանվոր. — (Յնժագին) փախան ...
ծակերը մտան... Ուռու...

Մի քանի ուրիշ քանվորներ
Նրանցից մեկը. — Ձինվորները չկրակեցին...
(Գրսից ուռուայի ցնժագին վորոս):

2-րդը. — Գործարանը մեր ձեռքումն է. Շիրաե-
վի տղերքը լավ ժամանակ հասան:

3-րդը. — Սահակին ուր տարան:

4-րդը. — Չգիտեմ... ասացին, վոր տուն չտանեն...

5-րդը. — Իմ քարը լավ կպավ նշանին... Արյու-
նը փանտանի պես դուրս ցատկեց. կրնկի
վրա պատվեց ու ընկավ:

- 3-րդ բանվոր. — Ուռու... Թող կորչեն բուր-
ժուկազիայի արբանյակները...
- 6-րդ բանվոր. — Սահակին բերում են... Ընկեր
Գրիգորը ասաց, վոր Սեդրակի մաս տա-
նենք... (Մտնում է 2-րդ բանվորը):
- 2-րդ բանվոր. — Սեդրակ... Ասացին, լսեցին...
(Սեդրակը լուռ ժպտում է: Աննան անսար-
բեր այդ ցնծությանը, լուռ նսած է...)
Մեռավ... (Մի ֆանի հոգի ձեռքերի վրա
ներս են բերում Սահակին յեվ դնում թախ-
սի վրա: Սեդրակը մոտենում է, չոգում մոտը
յեվ բռնում ձեռքը):
- Սահակ. — Սեդրակ... Աննա... Թույրիկ մեռավ
ձագուկդ... Այս է ես աշխարհի բանը.
պետք է քաղցից, ցրտից մեռնեն մեր զա-
վակները, վոր հաբուստները լափեն մեր
արյուն քրտինքի պտուղները: Ընկերներ,
յես մեռնում եմ հավատը սրտումս, վոր
վերջի վերջո ձերն է հաղթանակը. հեռու
չե այն որը, վոր բանվորները, ճնշվածն ու
նեղվածը կըզգան իրենց բազուկների ուժը
և այն ժամանակ վայ նրանց... Հրդեհի
կարմիր բոցերը կըներկեն ամբողջ յերկրա-
գունդը և իմ շիրիմն ել կլուսավորվի այդ
հրդեհի բոցերից... Յես ել ընկա. շատերը
դեռ կընկնեն և շատերի դիակների վրայից

ե, վոր պիտի հասնենք նոր ծագող արևին,
 վորը պիտի ծագի... Կըծագի... ծագի...
 յես չը... Կարողացա... (Չայնը խեղդվում
 է) Մնաք բարով... Չմոռանաք վորքերիս ...
 (Մեռնում է):

Բոլորը.— (Գլխարկները հանում են):

Вы жертвою пали...

Չ-րդ բանվոր.— (Կարն կտրելով յերգը): Ընկեր-
 ներ... Մեռավ մեր ծերուկ ընկերը... Բայց
 նրա խիղճիս բողոքող հոգին, ազնիվ սիրտը
 մենք չենք մոռանա...

Սեղրակ.— (Բաց է բողնում Սահակի ձեռքը
 յեվ վոսի յնկնում. անցնում է դեպի յե-
 րեխայի պտուկած սենյակը յեվ մնում
 դռներում): Ընկերներ, այստեղ, այս փոք-
 րիկ, խոնավ նկուղի մեջ ընկած է մի փոք-
 րիկ դիակ, իմ վարդու դիակը... Նա մեռավ
 առանց բժշկի, դեղի, անունդի, պակասու-
 թյունից և առանց ողի... Մեռավ, վորով-
 հետև այս կյանքի խորդ զավակն էր: Մեր
 ծերունի ընկերն էլ ընկավ անհավասար
 կռվում: Բայց որ-որի վրա խտանում են
 մեր շարքերը... Լալու որ չե այսոր. հեռու
 վհատություն... Կռիմս սկսված է: Յես
 մաս չունեցա ձեր այսորվա պայքարի մեջ...

Յեսս ձեզ մենակ թողի, մնացի ինքս իմ վըշտի հետ... Բայց թող անիծված լինի, արյան ամեն մի կաթիլը թե անձնական հոգսերը ինձ յետ պահեն այս մեծ, ընդհանուր գործից: Խտացած շարքերով գրոհ կըսանք և քանդենք այդ գիշատիչ բորենիների բուռը...

Չ-րդ բանվոր.— Ընկերներ, այս հաղթությունը չի վերջանում. մեր պայքարը դեռ նոր է սկսվում: Կըզան ուրիշ զինվորներ. նրանք չեն հանդգնիլ հրաժարվել և կըսկսի արյունահեղ կռիվ... Միշտ զգաստ... պատրաստ, զինվեցեք ով ինչով կարող է: Տանիքների վրա հող, ավազ դիզեցեք, վոր նրանց աչքերը կուրացնենք: Մուտքի դռների առաջ բարրիկադներ... Դեպի գործ յերբ կըհարձակվեն, գիշեր թե ցերեկ, չզիտենք՝ միշտ պատրաստ... (Դրսից մեկի ձայնը): Գալիս են... (Իրարանցում... Հաս-հաս ձայները աստիճանաբար փոխվում են գոռում-գոչումի. ներս է մտնում մի յերիսասարդ բանվոր... շնչարգել...)

Յերիտասարդ բանվոր.— Հեծյալների մի վաշտ արշավում է դեպի մեր գործարանը...

Չ-րդ բանվոր.— Դեպի բարրիկադները...


Սեղրակ.—Աննա, թաղիր զավակիս մենակ. յես
 գնացի: (Գլխաբաց առնում է կացինը յեվ
 դուրս վազում... Իրարանցում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

1900—1926

Բազում—Յերևան





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045854

(564)

$\frac{I}{A8648}$